

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ «ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՆՈՐՈԳՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՂ ԵՎ ՆՈՐՈԳՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Զ/Զ	Անվանումը	Նկարագիրը
1	2	3
1.	Մասնագիտության (որակավորման) անվանումը և կոդը	Մասնագիտությունը՝ «Երաժշտական գործիքների պատրաստում և նորոգում», որակավորումը՝ «Երաժշտական գործիքների պատրաստող և նորոգող»:
2.	Դերը	Երաժշտական գործիքների պատրաստող և նորոգող մասնագետը գործիքների պատրաստման ձեռնարկություններում, ինչպես նաև անհատ ձեռներեցությամբ զբաղվելիս կատարում է երաժշտական գործիքների պատրաստման և նորոգման աշխատանքներ: Մասնագետի աշխատանքի ընթացքը ներառում է հիմնանյութի կառուցվածքով ծառատեսակների ճանաչումը, հիմնանյութի ընտրությունը, հիմնանյութի մշակումը, գծանշումների պատրաստումը, ձեռքի աշխատանքի գործիքներով և հաստոցներով տիպային փայտամշակման աշխատանքների իրականացումը, երաժշտական գործիքների դետալների պատրաստումը և նորոգումը, դրվագումը, դետալների ամրացումը, երեսապատման և երեսամշակման աշխատանքների իրականացումը, համապատասխան հնչունաշարի պահպանում, լարումը:
3.	Խնդիրների բնագավառը և աշխատանքային գործընթացները	
3.1.	Բնագավառ 1.	Նախապատրաստական աշխատանքների կատարում
	Աշխատանքային գործընթացները	<ol style="list-style-type: none"> 1) Փայտանյութի ճանաչում, նախապատրաստվածքի ընտրում, չորության աստիճանի որոշում և աշխատանքային գոտի տեղափոխում, 2) կտրիչ և ստուգիչ-չափիչ գործիքների, օժանդակ նյութերի, աշխատանքային գծագրերի և այլ պարագաների դազգահի սեղանին դասավորում, իսկ աշխատանքի ավարտին՝ այդ ամենի հավաքում, 3) փայտամշակման հաստոցները, սարքավորումները և մեքենայական գործիքները աշխատանքի նախապատրաստում, 4) աշխատանքի ավարտին տաշեղի հավաքում, կույտավորում, սարքավորումները և աշխատատեղը փոշուց մաքրում, հաստոցների ուղղորդների յուղում:
	Կատարման չափանիշները	Աշխատատեղի, նախապատրաստվածքների, գործիքների, փայտամշակման հաստոցների ու սարքավորումների աշխատանքի նախապատրաստման գործառույթները կատարում է ըստ աշխատանքի կազմակերպման սկզբունքի և ներքին կարգուկանոնի պահանջներին համապատասխան:

3.2.	Բնագավառ 2.	Երաժշտական գործիքների դետալների տեխնոլոգիական մշակման գործընթացների իրականացում
	Աշխատանքային գործընթացները	<ol style="list-style-type: none"> 1) երաժշտական գործիքների դետալների նախապատրաստվածքների չափանշում, գծանշում, ձևում (կտրում), 2) փայտամշակման հաստոցների ու սարքավորումների վերջնակարգաբերում, 3) փայտամշակման հաստոցներով ու սարքավորումներով և մեքենայական ու ձեռքի գործիքներով երաժշտական գործիքների դետալների սկզբնական և մաքրատաշ մշակման հիմնական գործողությունների կատարում՝ սղոցում, ֆրեզում, գայլիկոնում, տաշում, փորում, ռանդում, հղկում, 4) ձեռքի գործիքներով և մեքենայական եղանակով զարդանախշերի փորագրում, դրվագում, 5) երաժշտական գործիքների դետալների վերջնամշակում:
	Կատարման չափանիշները	<p>Երաժշտական գործիքների դետալների նախապատրաստվածքների չափանշման, գծանշման, ձևման, փայտամշակման հաստոցների ու սարքավորումների վերջնակարգաբերման, դրանց միջոցով և մեքենայական ու ձեռքի գործիքներով երաժշտական գործիքների դետալների սկզբնական ու մաքրատաշ մշակման, զարդանախշերի փորագրման, դրվագման և վերջնամշակման գործընթացները կատարում է ըստ տեխնոլոգիայի և գծագրի, ապահովում է դետալների մշակման ճշգրտությանն ու մաքրությանը ներկայացվող պահանջները, պատրաստում է չափանիշներին համապատասխանող արտադրանք, պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:</p>
3.3.	Բնագավառ 3.	Հյուսնային միացումների կատարում
	Աշխատանքային գործընթացները	<ol style="list-style-type: none"> 1) ամրակներով (փայտամեխ, ներդրովի բուլթակ, սեպ, երիթ, գամ, հեղույս, անուր, անկյունակ և այլն) հյուսնային միացումների կատարում, 2) սոսնձման եղանակով՝ ոսկրային, սպիտակուցային, սինթետիկային, Էպօքսիդային հյուսնային միացումների կատարում:
	Կատարման չափանիշները	<p>Ամրակներով և սոսնձման եղանակով կարողանում է կատարել՝ ոսկրային, սպիտակուցային, սինթետիկային, Էպօքսիդային հյուսնային միացումներ, պահպանում է տեխնոլոգիական կարգապահությունը, ապահովում է պահանջվող որակ:</p>
3.4.	Բնագավառ 4.	Երաժշտական գործիքների նորոգում
	Աշխատանքային գործընթացները	<ol style="list-style-type: none"> 1) երաժշտական գործիքների տարրերի զննում, թերությունների արձանագրում, 2) երաժշտական գործիքների նորոգման համար

		անհրաժեշտ հիմնական ու օժանդակ կյուլթերի և պարագաների ցանկի կազմում, 3) նորոգման-վերականգնման եղանակների ընտրում, 4) վնասված մասերի նորոգում հնարավորության սահմաններում, իսկ անհնարիության դեպքում նոր տարրերի պատրաստում, վերջնամշակում և տեղադրում, պահանջվող որակի ապահովում:
	Կատարման չափանիշները	Կարողանում է պարզել և արձանագրել ներկայացված երաժշտական գործիքի թերությունները: Կարողանում է ընտրել գործիքի նորոգման-վերականգնման եղանակները: Հնարավորության սահմաններում կատարում է գործիքի վնասվածմասերի նորոգում, իսկ անհնարիության դեպքում նոր տարրերի պատրաստում, վերջնամշակում և տեղադրում: Երաժշտական գործիքների նորոգման-վերականգնման աշխատանքները կատարում է սահմանված ժամկետում և ապահովում է պահանջվող որակ:
3.5.	Բնագավառ 5.	Երաժշտական գործիքների պատրաստում
	Աշխատանքային գործընթացները	1) Եսթիզների գծում, չափերի տեղադրում, 2) պատրաստման առկա միջոցների շրջանակներում համապատասխան տեխնոլոգիայի ընտրություն 3) նմուշի պատրաստում, 4) նկատված թերությունների շտկում, վերջնամշակում, 5) պատրաստած նմուշը մասնագիտական գնահատման ներկայացում:
	Կատարման չափանիշները	Ցուցաբերում է երաժշտական գործիքների դետալների Եսթիզների գծման, չափերը տեղադրման, փորձնական նմուշների պատրաստման, դրանց պատրաստման հնարավորությունը պարզելու կարողություններ:
3.6	Բնագավառ 6.	Երաժշտական գործիքների լարում
	Աշխատանքային գործընթացները	1) Երաժշտական գործիքների տեմբրային առանձնահատկությունների տարբերակում, 2) յուրաքանչյուր երաժշտական գործիքի հնչյունաշարի պահպանում, 3) երաժշտական գործիքների լարում:
	Կատարման չափանիշները	Կարողանում է տարբերակել երաժշտական գործիքների խմբերի տեմբրային առանձնահատկությունները, ճիշտ որոշել տվյալ գործիքի հնչյունաշարը, լարել գործիքը:
3.7	Բնագավառ 7.	Անվտանգության տեխնիկայի և հրդեհային անվտանգության կանոնների պահպանում
	Աշխատանքային գործընթացները	1) անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանում՝ փայտամշակման սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքների իրականացման ժամանակ, 2) անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանում՝

		<p>առողջության համար վնասակար, միաժամանակ հրդեհավտագ նյութերի՝ լաքերի, լուծիչների և քիմիական այլ նյութերի կիրառման դեպքերում,</p> <p>3) անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանում՝ մեքենայական գործիքներով աշխատանքների կատարման ժամանակ,</p> <p>4) պաշտպանիչ միջոցների կիրառում և համապատասխան բանվորական արտահագուստի կրում՝ հղկման, լաքապատման և առողջության համար վնասակար այլ տեխնոլոգիական գործընթացների իրականացման ժամանակ,</p> <p>5) էլեկտրաանվտանգության կանոնների պահպանում՝ երաժշտական գործիք պատրաստման ժամանակ,</p> <p>6) արտադրական սանիտարիայի և հիգիենիայի կանոնների պահպանում,</p> <p>7) հրդեհային անվտանգության կանոնների պահպանում, հրդեհի առաջացման կանխում, հրդեհի առաջացման դեպքում ղեկավարությանը անմիջապես ահազանգում և հրդեհաշիջման անհետաձգելի միջոցառումների ձեռնարկում,</p> <p>8) տեխնաժին և արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքներին մասնակցում,</p> <p>9) տուժածներին առաջին օգնության ցուցաբերում:</p>
	<p>Կատարման չափանիշները</p>	<p>Ցուցաբերում է անվտանգության տեխնիկայի, էլեկտրաանվտանգության և հրդեհային անվտանգության կանոնների իմացություն և դրանց պահանջների կիրառման ունակություն՝ փայտամշակման հաստոցների, սարքավորումների և մեքենայական գործիքների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքների իրականացման ժամանակ: Աշխատանքի անվտանգության և առողջության համար վնասակար տեխնոլոգիական գործընթացների իրականացման ժամանակ կիրառում է նախատեսված համապատասխան պաշտպանիչ միջոցները, կրում է սահմանված ձևի բանվորական արտահագուստ, պահպանում է արտահագուստի կրմանը ներկայացվող պահանջները և անվտանգության տեխնիկայի կանոններից բխող մյուս պահանջները: Իմանում է տեխնաժին և արտակարգ իրավիճակներում աղետի հետևանքների վերացման աշխատանքներին մասնակցության պահանջը և տուժածներին առաջին օգնության ցուցաբերման կանոնները:</p>
<p>4.</p>	<p>Պատասխանատվությունը</p>	<p>Երաժշտական գործիքներ պատրաստողը և նորոգողը կրում է պատասխանատվություն՝ սահմանված ժամկետում պահանջվող</p>

		որակի արտադրանքի պատրաստման, անվտանգության տեխնիկայի ու հրդեհային անվտանգության կանոնների պահպանության և աշխատանքային պայմանագրով ստանձնած մյուս պարտավորությունների կատարման համար:
5.	Բարդության աստիճանը	Երաժշտական գործիքներ պատրաստող և նորոգող որակավորման շրջանավարտը կատարում է պարզ և միջին բարդության աշխատանքներ:
6.	Մասնագիտական գիտելիքներ և կարողություններ	
6.1.	Մասնագիտական գիտելիքներ	<p>Պետք է իմանա.</p> <p>1. Ընդհանուր մասնագիտական առարկաների գծով.</p> <ol style="list-style-type: none"> 1) իր ընտրած մասնագիտության էությունն ու հասարակական նշանակությունը և դրա նկատմամբ ցուցաբերի մշտական հետաքրքրություն, 2) կառուցագիտական և տեխնոլոգիական փաստաթղթերի միասնական համակարգերի (ԿՓՄՅ-ի, ՏՓՄՅ-ի) պահանջները և դրանցից օգտվելու կանոնները, 3) երաժշտական գործիքների պատրաստման և նորոգման ստանդարտների ընդհանուր պահանջները, 4) համափոխարինելիության կանոնները, 5) աշխատանքային գծագրեր և էսքիզներ գծելու ընդհանուր կանոնները, 6) փայտամշակման ոլորտի մասնագիտական տերմինաբանությունը, 7) Էլեկտրաանվտանգության կանոնները՝ երաժշտական գործիք պատրաստման ժամանակ, 8) երաժշտական գործիքներ պատրաստման համար կիրառվող կառուցվածքային և օժանդակ նյութերի տեսականին, 9) երաժշտական գործիքներ պատրաստման համար կիրառվող ծառերի և բնափայտերի տեսակները, կառուցվածքը, դրանց ֆիզիկական, քիմիական ու մեխանիկական հատկությունները, յուրահատկությունները և կիրառման բնագավառները, 10) բնափայտի հիմնական տեսակների բնութագրերը, արատները, տեսակայնությունը, 11) փայտանյութի և սղոցանյութի պահպանման ու չորացման կանոնները, 12) ամրակման դետալների և նյութերի տեսականին, 13) երաժշտական տարրական գրագիտությունը, 14) երաժշտական գործիքների ձայնարտադրման և կառուցվածքային առանձնահատկությունները, 15) երաժշտական գործիքների կատարողական

		<p>առանձնահատկությունները:</p> <p><u>2. Հատուկ մասնագիտական առարկաների գծով.</u></p> <ol style="list-style-type: none"> 1) աշխատանքի անվտանգության, հրդեհային անվտանգության և արտադրական սանիտարիայի ու հիգիենայի կանոնները՝ հյուսնային աշխատանքների կատարման ժամանակ, 2) աշխատատեղում կիրառվող, սակայն առողջության համար վնասակար քիմիական նյութերի նաև ոչուրավառ նյութերի հետ վարվելու կանոնները և պաշտպանիչ միջոցները, 3) երաժշտական գործիքների պատրաստման մեջ կիրառվող փայտամշակման հաստոցների, սարքավորումների ու մեքենայական գործիքների հիմնական տեսակները, նշանակությունը, կառուցվածքը, կարգաբերման ու վերջնակարգաբերման կանոնները, 4) հաստոցների ու սարքավորումների շահագործման, ընթացիկ տեխնիկական սպասարկման և աշխատանքում մանր թերությունների վերացման կանոնները, 5) դետալների նախապատրաստվածքների նախապատրաստման, չափանշման և գծանշման կանոնները, 6) բնափայտի և փայտանյութերի ձևման եղանակները, 7) ձեռքի գործիքներով և փայտամշակման հաստոցներով ու սարքավորումներով իրականացվող փայտանյութի մշակման եղանակները, տեխնոլոգիական գործընթացները և աշխատանքների կատարման հերթականությունը (չափանշում, գծանշում, սղոցում, ռանդում, անցքերի գայլիկոնում, անցքերի եզրալայնում, հղկում, փորակում, դրվագում վերջնամշակում և այլն), 8) փայտանյութի մշակման համար կիրառվող կտրիչ գործիքների տեսականին, նշանակությունը, սրման, տեղակայման և օգտագործման կանոնները, 9) օժանդակ գործիքների տեսականին, նշանակությունը, կիրառման կանոնները, 10) դետալների բազայավորման, սևեռակման ու ամրակման համապիտանի (ունիվերսալ) հարմարանքները, գայլիկոնման համուղղիչների տեսակները, դրանց նշանակությունը, կիրառման կանոնները, 11) ստուգիչ-չափիչ գործիքների տեսականին, նշանակությունը, կիրառման կանոնները, 12) հյուսնային աշխատանքների կատարման որակի
--	--	---

		<p>ստուգման կանոնները,</p> <p>13) ըստ ձևի, չափերի, թուլտվածքների ու խտեցվածքների դետալների մշակման ճշգրտության ստուգման եղանակները,</p> <p>14) ըստ մակերևույթների անհարթությունների, խազերի, խավոտության և թավոտության դետալների մշակման ճշգրտության ստուգման եղանակները,</p> <p>15) երաժշտական գործիքների դետալների մեխանիկական մշակման թերությունների վերացման և որակի բարձրացման եղանակները,</p> <p>16) փատանյութի արատների լցափակման եղանակները,</p> <p>17) կտրիչ գործիքների սրման միջոցները, եղանակները, նախատեսված պաշտպանիչ միջոցները և կիրառման կանոնները,</p> <p>18) հյուսնային միացումների կատարման եղանակները,</p> <p>19) երաժշտական գործիքների վերջնամշակման համար կիրառվող հղկանյութերի ու ոլորկման գործիքների տեսակները, կիրառման եղանակները,</p> <p>20) երաժշտական գործիքների հիմնական թերությունները և դրանց վերացման ու նորոգման եղանակները:</p>
6.2.	<p>Մասնագիտական կարողություններ</p>	<p>Պետք է կարողանա.</p> <p><u>1.Ընդհանուր մասնագիտական առարկաների գծով.</u></p> <p>1) օգտվել՝ կառուցագիտական ու տեխնոլոգիական փաստաթղթերի միասնական համակարգերից (ԿՓՄՅ-ից, ՏՓՄՅ-ից), ՀՀ պետական ստանդարտներից և տեղեկատու գրականությունից,</p> <p>2) կարողալ գծագրեր, էսքիզներ, մասնագրեր և տեխնիկական փաստաթղթեր,</p> <p>3) կատարել պարզ դետալների գծագրերի և էսքիզների պրոեկցիաների կառուցում երեք հարթությունների վրա,</p> <p>4) կատարել տեխնիկական չափումներ և գծագրերում համապատասխան նշումներ,</p> <p>5) ճիշտ ընկալել և կիրառել փայտամշակման ոլորտի մասնագիտական տերմինաբանությունը,</p> <p>6) կիրառել էլեկտրոնային գծագրման կանոնները՝ երաժշտական գործիքների պատրաստման ժամանակ,</p> <p>7) կիրառել էլեկտրատեխնիկայի գծով գիտելիքները՝ կատարվող աշխատանքների սահմաններում,</p> <p>8) ճանաչել, ընտրել և օգտագործել երաժշտական գործիքների պատրաստման համար փայտանյութեր և օժանդակ նյութեր,</p> <p>9) տեսակավորել բնափայտը ըստ տեսակների, արատների</p>

		<p>և ռազմական օգտագործել դրանք,</p> <p>10) պահպանել փայտանյութի և սղոցանյութի պահման և չորացման կանոնները,</p> <p>11) շահագործել փայտամշակման հաստոցներ, սարքավորումներ և մեքենայական գործիքներ,</p> <p>12) ընտրել և աշխատանքում կիրառել՝ ամրակման դետալներ, օժանդակ պարագաներ և օժանդակ այլ նյութեր,</p> <p>13) ընտրել տնտեսապես արդյունավետ եղանակներ՝ երաժշտական գործիքների պատրաստման և նորոգման համար,</p> <p>14) լարել երաժշտական գործիքները համաձայն տվյալ գործիքի հնչյունաշարի,</p> <p>15) արդյունավետորեն օգտագործել առկա պաշարները:</p> <p><u>2.3. Բատուկ մասնագիտական առարկաների գծով.</u></p> <p>1) կիրառել աշխատանքի անվտանգության և արտադրական սանիտարիայի կանոնները հյուսնային աշխատանքների կատարման ժամանակ,</p> <p>2) պահպանել աշխատատեղում կիրառվող, սակայն առողջության համար վնասակար քիմիական նյութերի նաև դյուրավառ նյութերի հետ վարվելու կանոնները, կիրառել անվտանգ աշխատանքի համար նախատեսված պաշտպանիչ միջոցներ,</p> <p>3) կարգաբերել, գործարկել և անջատել փայտամշակման հաստոցները, սարքավորումներն ու մեքենայական գործիքները,</p> <p>4) իրականացնել հաստոցների ու սարքավորումների ընթացիկ տեխնիկական սպասարկում և աշխատանքում մանր թերությունների վերացում,</p> <p>5) կատարել դետալների նախապատրաստվածքների չափանշում, գծանշում, ձևում,</p> <p>6) ձեռքի ու մեքենայական գործիքներով և փայտամշակման հաստոցներով կատարել դետալների սկզբնական և մաքրատաշ մշակման տեխնոլոգիական գործընթացների իրականացում՝ սղոցում, ֆրեզում, անցքերի գայլիկոնում ու եզրալսնում, տաշում, փորակում, ռանդում, հղկում և այլն,</p> <p>7) պահպանել տեխնոլոգիական աշխատակարգերը, գործընթացների հերթականությունը և ապահովել թողարկվող արտադրանքի որակը,</p> <p>8) ստուգել և պարզել դետալների մշակման ճշգրտությունը՝</p>
--	--	---

		<p>ըստ ձևի, չափերի, թուլտվածքների ու նստեցվածքների,</p> <p>9) որոշել դետալների մշակման ճշգրտության աստիճանը՝ ըստ մակերևույթների անհարթությունների, խազերի, խավոտության և թավոտության,</p> <p>10) բարձրացնել դետալների մշակման որակը՝ ըստ ձևի, չափերի և մակերևույթների անհարթությունների աստիճանի,</p> <p>11) վերացնել փայտանյութի արատները, մշակման թերությունները և սրել կտրիչ գործիքները,</p> <p>12) մշակել փայտասեպեր, բլթանցքեր, բույներ և այլն,</p> <p>13) կատարել հյուսնային միացումներ,</p> <p>14) որոշել նորոգման ներկայացրած երաժշտական գործիքի թերությունների վերացման եղանակները և կատարել նորոգում, վերականգնում,</p> <p>15) ստուգել հյուսնային աշխատանքների կատարման որակը:</p>
7.	Ընդհանուր ոչ մասնագիտական գիտելիքներ և կարողություններ	
7.1.	Ընդհանուր ոչ մասնագիտական գիտելիքներ	<p>Պետք է իմանա.</p> <p>1) ՀՀ Սահմանադրությունը,</p> <p>2) մասնագիտական գործունեության բնագավառում աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորման վերաբերյալ օրենսդրական ակտերի և նորմատիվ այլ փաստաթղթերի դրույթները,</p> <p>3) անհրաժեշտ տեղեկատվության փնտրման եղանակներն ու միջոցները, տեղեկատվական և հեռահաղորդակցական միջոցների կիրառման գործելաձևերը,</p> <p>4) հայոց գրական լեզվի և շարահյուսության կանոնները,</p> <p>5) առնվազն մեկ օտար լեզու (պարզ շփման մակարդակով),</p> <p>6) համաշխարհային մշակույթի ժամանակակից ձեռքբերումները,</p> <p>7) էթիկայի հիմնական կանոնները՝ գործընկերների, ղեկավարների և պատվիրատուների հետ հաղորդակցվելու ժամանակ,</p> <p>8) շուկայական տնտեսության հիմնական սկզբունքները, շուկայում ապրանքների և ծառայությունների առաջարկի և պահանջարկի հասկացությունները,</p> <p>9) կազմակերպության արտադրատնտեսական գործունեության սկզբունքները, ձևերը, բնութագիրը,</p> <p>10) գնագոյացման մեխանիզմները,</p> <p>11) բնապահպանական տարածքային հիմնախնդիրները,</p>

		<p>12) հիմնական վտանգների տեսակները և մասնագիտական գործունեությունում դրանց առաջացման հավանականության նվազեցման եղանակները,</p> <p>13) հրդեհային անվտանգության կանոնները և հրդեհի կանխման գործելաձևերը,</p> <p>14) տեխնածին արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման գործելաձևերը,</p> <p>15) տուժածներին առաջին օգնություն ցույցաբերելու կանոնները:</p>
7.2.	<p>Ընդհանուր ոչ մասնագիտական կարողություններ</p>	<p>Պետք է կարողանա.</p> <ol style="list-style-type: none"> 1) պաշտպանել իր իրավունքները՝ իրավական և նորմատիվային փաստաթղթերին համապատասխան, 2) աշխատել թիմում, արդյունավետ հաղորդակցվել գործընկերների, ղեկավարների և պատվիրատուների հետ, 3) վերլուծել աշխատանքային իրադրությունը և կազմակերպել սեփական գործունեությունը՝ ելնելով տրված նպատակից և դրան հասնելու եղանակներից, 4) պահպանել էթիկայի կանոնները, կառուցել և վերլուծել իր խոսքը՝ դրա չափի, պատշաճության և բարոյականության նորմերին համապատասխան, 5) ներկայացնել մայրենի լեզվով մասնագիտական հստակ տեղեկատվություն, 6) հաղորդակցվել առնվազն մեկ օտար լեզվով (պարզ շփման մակարդակով), 7) դրսևորել անհրաժեշտ ֆիզիկական պատրաստվածություն, 8) իրականացնել տեղեկատվության փնտրում, որն անհրաժեշտ է մասնագիտական խնդիրների արդյունավետ լուծման համար, 9) օգտագործել տեղեկատվական-հեռահաղորդակցման տեխնոլոգիաները մասնագիտական գործունեությունում, 10) պահպանել հրդեհային անվտանգության կանոնները, կանխել հրդեհի առաջացման պատճառները, 11) մասնակցել տեխնածին և արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքներին, 12) կիրառել կենսասանվտանգ տեխնիկա, 13) տուժածներին ցուցաբերել առաջին օգնություն:
8.	<p>Որակավորման մակարդակը</p>	<p>ՈՍ - 5</p>